ՀԿՀ սկզբունքներ և գենդերային քաղաքականություն

#քաղաքականության փաստաթուղթ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում կանանց հիմնադրամը՝ որպես ֆեմինիստական ու կանանց կազմակերպություն, առաջնորդվում է որոշակի հիմնարար սկզբունքներով, որոնք հաշվի են առնվում մեր գործընկեր կազմակերպությունների, կանանց խմբերի ու նախաձեռնությունների դրամաշնորհային ծրագրերը գնահատելիս: Հետևաբար, մեզ համար չափազանց կարևոր է ներկայացնել մեր գենդերային քաղաքականությունն ու աշխատանքային սկզբունքները՝ մեր համագործակցությունն ու գործընկերությունն էլ ավելի արդյունավետ դարձնելու համար:

Մեր սկզբունքներն են.

1. Որպես հիմնադրամ՝ մեր գլխավոր նպատակը կանանց ու աղջիկների զորեղացումն է, նրանց ինքնաիրացմանն ու ինքնազարգացմանը նպաստելը իրենց իսկ կողմից իրագործվող ծրագրերի միջոցով: Հետևաբար, մեր և ձեր ծրագրերի **կիզակետում պիտի լինեն** նախ և առաջ **կանայք ու աղջիկները**, նրանց կարիքներն ու պահանջմունքները:
2. Մենք խրախուսում ենք **կանանց կարողությունների նորացմանն ուղղված ներդրումները**: Ձեր ծրագրերը պետք է ուղղված լինեն կանանց մեջ նման կարողությունների բացահայտմանն ու դրանց կիրառմանը նրանց իսկ օգտին: Կանայք ու աղջիկներն ի վիճակի են գտնելու իրենց խնդիրների լուծումները, նրանցից շատերը պարզապես կարիք ունեն ճիշտ մոտիվացիայի ու հավատի առ այն, որ իրենք ունեն իրականությունը փոխելու կարողություն:
3. Անհավասարությունն առկա է ոչ միայն տարբեր սեռերի միջև, այլև նույն սեռի ներկայացուցիչների: Շատ կանայք առավել անապահով վիճակում են գտնվում, քան մյուսները: Ուստի, փորձեք հասկանալ **ամենամարգինալացված կանանց կարիքները**՝ անհավասարությունը վերացնելու նպատակով: Կենտրոնացեք անբարենպաստ վիճակում գտնվող համայնքների կանանց վրա՝ նրանց համար նոր հնարավորություններ ստեղծելով, միաժամանակ նրանց տալով համապատասխան հմտություններ ու գիտելիք:

4. Լուծումներն ու ծրագրերը լավագույն արդյունք են տալիս, երբ աշխատում են ընդգրկված յուրաքանչյուր անձի դեպքում: Մեզ համար սոցիալական նորարարությունը **շահառուներին ծրագրի դիզայնի կենտրոնում դնելն** է, առավել ճկուն համատեղ ստեղծագործական գործընթացներ ունենալը ու նրանց ազատություն տալը՝ իրենց սեփական ծրագրերի վրա աշխատելու, որն էլ կբարելավի նրանց հմտությունները: Կարողությունների զարգացումը նախ և առաջ պետք է ուղղված լինի թիրախային խմբի կարիքներին:
5. Ձեր ծրագրերում հնարավորինս **ներառական** եղեք: Փորձեք չանտեսել ոչ մեկին, հաշվի առեք **կանանց ամենախոցելի խմբերին**, ինչպես օրինակ՝ տնային տնտեսության մեջ աշխատող, միգրանտ, գյուղական համայնքներում բնակվող, գենդերի կամ գենդերային ինքնության ու սեռական կողմնորոշման հիմքով բռնության ենթարկված, էթնիկ և ռասայական պատկանելիության հիմքով խտրականության ենթարկված, ռազմական կոնֆլիկտներից տուժած կամ նման տարածքներում ապրող կանայք, երիտասարդ կանայք, սոցիալ-տնտեսապես խոցելի կանայք և այլք:
6. Գործընկերներ փնտրելիս հետևեք կանանց ուժեղացման և իշխանական հարաբերությունների չեզոքացման սկզբունքին: **Համագործակցեք կանանց կողմից ղեկավարվող կազմակերպությունների, ընկերությունների հետ կամ էլ պարզապես կին անհատների**: Եթե նման հնարավորություն չկա, ապա ուշադիր զննեք բոլոր առկա տարբերակները՝ խուսափելու համար սեքսիստ, կնատյաց կամ հակաֆեմինիստական հայացքների տեր կազմակերպությունների ու անձանց հետ համագործակցությունից:
7. Ուշադրություն դարձրեք ձեր ծրագրերի **կայունության** բաղադրիչին, դրանց **երկարաժամկետ ազդեցությանը**: Ձեր մոտեցումը պետք է ամրապնդի շահառուների կարողությունները: Հետևեք, որ այդ ռազմավարությունը գործի նաև ծրագրից դուրս:
8. Ընդգրկեք հնարավորինս շատ կանանց ու աղջիկների: Մենք ուժեղ ենք, երբ **մեր խնդիրները միավորում ենք** տեղական, տարածաշրջանային և գլոբալ առումով, և երբ **միավորում ենք մարդկանց, կազմակերպությունները, շարժումները**: Նման

կապերը խմբին թույլ են տալիս կիսել, սովորել ու միասին կազմակերպվել՝ ուժեղացնելու համար կանանց իրավունքների շարժումները:

9. Բացի կանանց սոցիալ-տնտեսական զորեղացման՝ անհրաժեշտ է աշխատել **քաղաքականության մեջ ու քաղաքական գործընթացներում նրանց ընդգրկվածության** ուղղությամբ, քանի որ կյանքի գլխավոր հարցերն այդտեղ են որոշվում: Կանայք պիտի իրենց ձայնն ունենան այդտեղ, քանի որ քաղաքական որոշումները ազդում են նրանց կյանքի վրա:
10. Մենք աջակցում ենք **խաղաղապահպան և հետկոնֆլիկտային շրջանի վերակառուցման գործընթացներում կանանց մասնակցությանը**, օգնում նրանց մեծացնել ներկայացվածությունը անվտանգության ոլորտում ֆեմինիստական տեսանկյունից ու խրախուսում սեռական բռնության ու շահագործման հանդեպ անհանդուրժողականության քաղաքականությանը:
11. Մենք խրախուսում ենք **գենդերային բյուջետավորումը**, այսինքն՝ բյուջեի գնահատումը գենդերի հիմքով, բյուջետային գործընթացի բոլոր մակարդակներում գենդերային հեռանկարի պահպանումը, որը թույլ է տալիս եկամուտների և ծախսերի վերակազմավորում՝ գենդերային հավասարություն խթանելու նպատակով: Քաղաքականություններն ու ծրագրերը տարբեր ազդեցություններ են ունենում կանանց ու տղամարդկանց վրա, հետևաբար, գենդերային բյուջետավորումը թույլ է տալիս ավելի լավ հասկանալ նրանց համապատասխան կարիքները և օպտիմալ որոշումներ կայացնել: